ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

Ն. ԳԵՏԱՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 18-Ա

14 մայիսի 2019թ.

## «Ն. ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԱՂԱՄԱՍԵՐԻ ՈՌՈԳՄԱՆ ՑԱՆՑԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ » ԾՐԱԳՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԵՎ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄ՝ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 25-րդ ենթակետի պահանջներով և նկատի ունենալով, որ համայնքային ֆինանսական ներդրումներ կատարելու պայմանով 2019թ. ՀՀ բյուջեից համայնքներին հատկացվելու են նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Համաձայնել համայնքի ղեկավարի առաջարկությանը և թույլատրել ներկայացնելու «Ն. Գետաշեն համայնքի ոռոգման ցանցի կառուցման» տնտեսական զարգացման ծրագիրը:

2. Սուբսիդիայի ստացման համար գործող կարգող կազմել և ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան ներկայացնել«Ն. Գետաշեն համայնքի ոռոգման ցանցի կառուցման» տնտեսական զարգացման ծրագրի ֆինանսավորման հայտը:

3. Սահմանել, որ ծրագրի ներկայացման համար համայնքի 2019թվականի բյուջեով բավարար ֆինանսական միջոցներ են նախատեսված ծրագիրը իրականացնելու և համայնքային ներդրում կատարելու համար:

4. Սույն որոշումն ուժի մեջ է՝ 2019թ մայիսի 14-ից :

Կողմ - 9 Դեմ 0 Ձեռնպահ 0

Ավագանու անդամներ

Ն. Ստեփանյան

Ն. Միրզաջանյան

Վ. Կիրակոսյան

Ս. Ղազարյան

Գ. Գևորգյան

Ս. Գոլանցյան

Խ. Փինաչյան

Ա. Արսենյան

Համայնքի ղեկավար Կ. Գևորգյան